



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ № 11Լ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ 2007
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 23Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 21.1-րդ հոդվածի 4-րդ մասը, 72-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» թիվ 23Լ որոշման 3-րդ հավելվածը լրացնել «19. Կոռուպցիոն հանցագործություններ» և «20. Գործարար միջավայրին առնչվող դատական գործեր» բաժիններով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 08-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

**2018թ. հունվարի 29
ք. Երևան**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2018թ. հունվարի 29-ի թիվ 11Լ որոշման

«19. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

19.1 Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.2 Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.3 Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.4 Մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.5 Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.6 Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.7 Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.8 Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.9 Ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.10 Խնամքն ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.11 Խարդախությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.12 Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.13 Գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.14 Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը

19.15 Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.16 Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը)

19.17 Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.18 Գույքային չարաշահումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.19 Հակամրցակցային գործունեությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.20 Վարկային պատմություն և վարկային տեղեկատվություն ապօրինի ստանալը, օգտագործելը կամ հրապարակելը

19.21 Առևտրային կաշառքը

19.22 Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսավոր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը

19.23 Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը

19.24 Կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.25 Հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.26 Օրենքով չնախատեսված զինված միավորումներ ստեղծելը կամ դրանց մասնակցելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.27 Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.28 Ռ-ադիոակտիվ նյութեր հափշտակելը կամ շորթելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.29 Խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.30 Չենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.31 Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.32 Համակարգչային տեղեկություններ փոփոխելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.33 Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.34 Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.35 Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.36 Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելը կամ շորթելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.37 Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տալը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

19.38 Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելը կամ պահելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

- 19.39 Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.40 Ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.41 Ապօրինի որսը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.42 Ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.43 Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը
- 19.44 Պաշտոնեական լիազորություններն անցնելը
- 19.45 Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը
- 19.46 Կաշառք ստանալը
- 19.47 Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը
- 19.48 Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը
- 19.49 Կաշառք տալը
- 19.50 Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը
- 19.51 Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը
- 19.52 Կաշառքի միջնորդությունը
- 19.53 Պաշտոնեական կեղծիքը
- 19.54 Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը
- 19.55 Անօրինական միգրացիայի կազմակերպումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.56 Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.57 Դատավորների որակավորման քննության կամ մասնագիտական պատրաստման քննությունների հարցերի գաղտնիությունը խախտելը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.58 Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը
- 19.59 Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը
- 19.60 Դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին ապօրինի միջամտելը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով
- 19.61 Ապօրինի ձերբակալելը կամ կալանավորելը
- 19.62 Ապացույցները կեղծելը
- 19.63 Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը
- 19.64 Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը
- 19.65 Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը
- 19.66 Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը
- 19.67 Վարձկանությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով:

20. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԱՈՆՉՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

20.1 Շահագրգռվածության առկայությամբ կատարված գործարքների վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում չտեղեկացնելու առնչությամբ հարուցված գործեր

20.2 Բաց բաժնետիրական ընկերություններում խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնների համատեղության առնչությամբ հարուցված գործեր

20.3 Խորհրդի անդամների ռեեստրում խորհրդի անդամի՝ այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններին վերաբերող իրավունքների և պարտականությունների չգրանցման առնչությամբ հարուցված գործեր

20.4 Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը նույն վարությամբ գրավոր ընթացակարգով օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ քննված լինելու հիմքով ներկայացված բողոքներ

20.5 Պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, ինչպես նաև առանձին պահանջները հաստատելու մասին որոշումների դեմ ներկայացված բողոքը վերաքննիչ դատարանում օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ քննված լինելու հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքներ

20.6 Սնանկության գործի ընթացքում կայացվող որոշման դեմ բերված բողոքը միջանկյալ (այն բոլոր դատական ակտերը, որոնք չեն ապահովում գործի վերջնական լուծումը) դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնների խախտման հիմքով ներկայացված բողոքներ

20.7 Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումները հետ ստանալու նպատակով սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ հարուցված գործեր

20.8 Սնանկության գործի ընթացքում կայացվող որոշման դեմ բերված բողոքը միջանկյալ՝ գործի վերջնական լուծում չպահանջող դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի խախտման հիմքով ներկայացված բողոքներ

20.9 Սնանկության կառավարչի կողմից առանձին գործողությունների (գույքագրում, գույքի իրացում) համար սահմանված ժամկետներ չպահպանելու առնչությամբ հարուցված գործեր

20.10 Պարտապանի պարտավորությունների առնչությամբ երաշխիք տված անձանց պարտավորությունների կատարման համար սնանկության կառավարիչների կողմից հարուցված գործեր

20.11 Պարզեցված վարույթի կարգով քննված գործեր և նման գործերով հայցազնի միջին չափը

20.12 Հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնությամբ ավարտված գործեր և նման գործերով վերադարձման ենթակա պետական գումարի չափը:»: